# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հնաբերդ բնակավայր

23.06.2025 թ.

Սույն թվականի հունիսի 23-ին՝ ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, տեղի ունեցավ «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Հնաբերդ բնակավայրի հիմնական դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վարդան Հարությունյանը: Նա նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչը ներկայացրեց դպրոցի կառուցման ժամանակ առաջացող հնարավոր բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, հողի որակի հետ կապված:

Դպրոցի նախագծման աշխատանքներ իրականացնող ընկերության ներկայացուցիչները ներկայացրեցին կառուցման վերաբերյալ տեղեկատվություն, նշեցին կառուցվող դպրոցի տեխնիկատնտեսական ցուցանիշները,

ներկայացրեցին շինարարության աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար:

Ներկաների կողմից հարցեր չհնչեցին, ներկաները ողջունեցին և գոհունակություն հայտնեցին կառուցվող դպրոցի վերաբերյալ:

Վ. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, դպրոցի ուսուցիչներ, համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Վարող և քննարկումների պատասխանատու՝ Վ.Հարությունյան

«Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քարանջյան